ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2025 թվականի 2-րդ կիսամյակի ընթացքում ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի զորահավաքային նախապատրաստության բաժնի կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ

2025 թվականի 2-րդ կիսամյակում ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի զորահավաքային նախապատրաստության բաժնի կողմից իրականացրել են հետևյալ աշխատանքները.

- Ճշգրտվել և թարմացվել են ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմում աշխատող զինապարտների գրանցամատյանները և պահեստազորայինների ցուցակները:
- Իրավական և մասնագիտական հսկողության շրջանակներում ուսումնասիրվել է Եղեգիսի համայնքապետարանի գործունեությունը՝ պաշտպանության, արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության բնագավառներում: Ուսումնասիրության ընթացքում համայնքապետարանի զորահավաքային նախապատրաստության գծով պատասխանատու աշխատակցի հետ տարվել են համապատասխան մեթոդական աշխատանքներ՝ նշված բնագավառում աշխատանքները բարելավելու համար:
- Ղեկավարվելով ՀՀ պաշտպանության մասին օրենքով և Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան որոշումներով 2025թ. 2-րդ կիսամյակում ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների հետ անց է կացվել առանձնացված շտաբային ուսումնավարժանք՝ «ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի անձնակազմի գործողությունները Հավաք ազդանշանի ժամանակ» թեմայով:
- Հաշվետու ժամանակաշրջանում նախատեսվել և ՀՀ ՆԳՆ ՓԾ ՎՁՄ փրկարարական վարչության ներգրավմամբ ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի և համայնքապետարանների ներկայացուցիչների հետ անց է կացվել ուսումնական

պարապմունք «ՀՀ Վայոց ձորի մարզում հնարավոր բնական և տեխնածին աղետների տեսակները, դրանց ազդեցությունը մարդկանց, շրջակա միջավայրի և կենսական նշանակության ենթակառուցվածքների վրա», «Բնական և տեխնածին աղետների կանխանգելման, հակազդման գործողությունների կազմակերպման և հետևանքների վերացման հիմարար մոտեցումները, մեթոդներն ու գործիքակազմը» թեմաներով:

- Պլանավորվել և ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի աշխատողների հետ անց է կացվել ուսումնական պարապմունք « ԱԻ և ՔՊ ժամանակ պետական կառավարման և տեղական իրքնակառավարման մարմինների ծառայողների համար անհատական անվտանգության պայուսակների կարևորությունը և անհրաժեշտությունը» թեմայով: Մշակվել և աշխատակիցներին են տրամադրվել համապատասխան ուղեցույցներ՝ նշված պայուսակները բազային պարագաներով համալրելու վերաբերյալ:

  Ձեռնարկված միջոցառումների արդյունքում մարզպետի աշխատակազմի աշխատողների կողմից ձեռք են բերվել անհատական անվտանգության պայուսակներ, որոնք համալրվել են համապատասխան պարագաներով:

- Հաշվետու ժամանակաշրջանում առաջին բուժօգնության վերաբերյալ հանրային ծառայողների իրազեկվածության և պատրաստվածության մակարդակի բարձրացմանն նպատակով, պլանավորվել և համապատասխան մասնագետի ներգրավմամբ ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի աշխատողների հետ անց են կացվել ուսումնական պարապմունքներ՝ «Առաջին բուժօգնության հիմունքները, հիմնական սկզբունքները» թեմաներով:

- ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի զորահավաքային նախապատրաստության բաժնի կողմից պարտադիր զինվորական ծառայության 2025թ. ամառային զորակոչի, ինչպես նաև վարժական հավաքների ընթացքում անհրաժեշտ աջակցություն է ցուցաբերվել ՀՀ ՊՆ ՀԶԿ Վայոց ձորի մարզի զինվորական կոմիսարիատին և տեղական ինքնակառավարման մարմիններին:

- 2025թ 2-րդ կիսամյակում ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի զորահավաքային նախապատրաստության բաժնի կողմից, որոշակի աշխատանքներ են իրականացվել նաև գաղտնիության ռեժիմի ապահովման ուղղությամբ:

ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի
զորահավաքային նախապատրաստության
բաժնի պետ՝ Ս. Միրզոյան

15.01.2026թ